(Մ.Օսիկյան)

«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/9 » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված՝ պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում 8.12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am,karine_sargsyan@taxservice.am,gayane_antonyan@taxservice.am,procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

5. ***Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին***

(Մ.Օսիկյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

6. ***Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին***

(Մ.Օսիկյան)

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն 4րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 3,5 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

7. ***Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***

(Մ.Օսիկյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը՝ հրավիրել «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/9 » գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը <<Կաղեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենք՝ ք.Երևան, Ներսիսյան 7/1 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Օսիկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Հայրապետյան,

Ռ.Բաբաջանյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան